

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՃԱՆԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



Վաստակաւոր ու արդիւնաշատ կեանքէ մը ետք՝ յողորմեայ աչքերը կը գոցէր ծերունի Պատրիարքը Աւետիք Պետրոս ԺԴ. Ար-
փիարեան 26 Հոկտ. 1937ին, սուգերու մէջ Թողլով իւր սիրասուն
որդիները: Դողդոջ մտմերն, որ սեւ դագաղին շուրջ սպառեցան՝
յանկերգեցին մեր ցաւերը երախտազէտ սիրոյ հետ՝ հանդէպ մե-
ծահոգի Հանգուցեալին. եւ սուգի օծումով բարձրացան մեր պա-
ղատանքները կոծելու հայրախնամ Երկինքը, որ շնորհէ մեզ աւե-

տարանական կատարելութեամբ ու անձնուրուրութեամբ քաջ հովիւ մը՝ այս ալեկոծ ժամանակիս: Եւ արդ Նախախնամութեան գուրգուրոտ հոգատարութեան մէկ երաշխիքը չէ՞ հայ հասարակութեան հանգէպ, երբ մեր աղերսները կ'ընդունուին եւ մեզ կը շնորհուի Պատրիարքական Աթոռին վրայ երիտասարդ, կարող, եռանդուն ու կորովի Պետ մը, որ երկնավստահ գիտակցութեամբ ձեռք կ'առնէ Հայ Կաթողիկէ Համայնքին ղեկը: Անխառն ուրախութեամբ կ'ողջունենք մեր նորընտիր Պատրիարք-Կաթողիկոսը՝ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան:

Անոր կեանքի ուղին ընթացած է իւր կոչման բարձրաթուիչ վերելքով:

Ծնած է Ախալցխա, 18 Սեպտ. 1895ին, բարեպաշտ ու կրօնասէր ծնողքէ, որ մանուկ հոգւոյն մէջ կը ցանէ աստուածսիրութեան եւ գաղափարական կեանքի ծառայելու առաջին սերմերը: Փոքրիկ Ղազարոս — այդ էր մկրտութեան անունը — իր ազնիւ ու կիրթ վարմունքով եւ հանգարտիկ ընութեամբ, որ ուսման նուիրուելու առանձնապէս ատակ կ'ընէ մանուկները, կը գրաւէ շուտով Կովկասի Առաքելական Կառավարիչ, ապա Եպիսկոպոս Գերպ. Սարգիս Տէր Արրահամեանի ուշադրութիւնը: Անոր հայրական առաջնորդութեան տակ փոքրիկ Ղազարոս կ'որոշէ նուիրուիլ քահանայական կոչման եւ տասնութի տարեկան հասակին մէջ 1906ին կ'ուղեւորի գէպի Յաւիտենական Քաղաքը: Ուրբանեան Կղերանոցի մէջ տասնութի տարի շարունակ կ'ուսանի: Ուսումը, մանաւանդ իւր բարձր կոչման հայող գիտութիւնները՝ մեծագոյն յագուրդ կու տան այդ երիտասարդ հոգւոյն. մտաւոր կարողութիւնները կը ծաւալին. կը մշակուին գաղափարները. կը խորանան ըմբռնումները. կ'ընդարձակի մասնաւորապէս անոր աշխարհայեցողութիւնը՝ աշխարհ կենդրոն՝ քրիստոնէութեան մայրաքաղաքին մէջ: Անոր կարողութիւններուն եւ գերակշիռ ճիգերուն ամենափայլուն վկայութիւնն է եռապատիկ վարդապետական տիտղոսը Աստուածաբանութեան, Փիլիսոփայութեան եւ Իրաւագիտութեան, զոր քահանայական ձեռնադրութենէ առաջ ստացաւ:

Գերպ. Գոյունեանի ձեռքէն կ'ընդունի քահանայական օծումը 1917ին, եւ իբրեւ Փրանկիսկոս Աղաճանեան կը բարձրանայ սուրբ Խորանին, որուն ցանկացած էր ամբողջ կեանքին մէջ: Նոյն տարին Ուրբանեան Կղերանոցին մէջ ուսուցիչ կը կարգուի: Երկու տարի նոյն պաշտօնով կը մնայ Հոռոմ, եւ 1919ին կ'երթայ հայրենիք հին յուշերու կարօտէ եւ առաքելական հոգիէ մղուած: Թիֆլիսի մէջ կը վարէ այդ ազմկալից օրերուն հայ կաթողիկէից ժողովրդապետութիւնը. մինչ կը հասնին իւր ջանքերուն պտուղները եւ կու գայ ժամանակը քաղելու զանոնք, ահա 1921ին կը հրաւիրուի Հոռոմ ստանձնելու Լեւոնեան հայ վարժարանի փոխ-տեսուչի պաշտօնը: Նոր Փոխ-տեսուչը առաքելական հոգւով վարուած՝ նոր պարտականութիւններու առջեւ իւր անսպասելի անձնուէր հոգին ի

սողաս կը դնէր սուրբ Խորանի մարդուող ապագայ սպասուորներուն. պատասխանատու գործ մը, ուր բազմաթիւ հոգիներու կրթութեան ու փրկութեան հարց է որ ի կշիռ կը դրուի: Սակայն հոգելից տեսուչը կը բաւարարէ իւր պաշտօնի պահանջներուն. անոր ուժերը կը ներեն գեռ յանձն առնել Հոռոմի Համալսարանին մէջ Փիլիսոփայութեան եւ Աստուածաբանութեան դասեր, որով ան օգտակար կ'ըլլար նաեւ Լեւոնեան Կղերանոցի սեղմ շրջանակէն աւելի լայն քրիստոնէայ մեծաշխարհի կղերին: Եւ չկայ աւելի մեծ դրուատիք մը իրեն այս նոր պաշտօնին մէջ, երբ կը վկայեն թէ միշտ խղճմանքով ու պարտաճանաչ պատրաստութեամբ բեմ բարձրացաւ միջազգային ու կնդիրներու դասախօսելու: Այդ ասպարէզին ինք յարմարագոյն անձն էր շնորհիւ իւր բազմակողմանի հմտութեան եւ բազմաթիւ լեզուներու ծանօթութեան. անոնց կարգին՝ հայերէն, լատիներէն, ֆրանսերէն, իտալերէն, անգլիերէն, ռուսերէն:

Այս ուսումնական տարիներու կը պարտինք գեղեցիկ գրութիւն մը իր գրչէն՝ Il beato Gomidas Keumurgian, Roma 1929, էջ XII + 252: Երանելի Տէր Կոմիտասի կեանքը գրելով կը դիտէր ծանօթացնել եւրոպական շրջանակներու «բոլոր ժողովուրդներէն աւելի նահատակ ազգի մը՝ Հայաստանի» մէկ մարտիրոս որդին: Եկեղեցական ազբերներու հմտութիւնն ու անոնց օգտակար գործումը հատորիս առաւելութիւնը կը կացուցանեն:

Տեսնելով այն փոյթն ու կարողութիւնները, զոր իրեն յանձնուած ամէն պաշտօնի մէջ ի յայտ կը բերէր՝ Եկեղեցական իշխանութիւնները բարեացակամ եւ քաջալերիչ ոգւով կը բարձրացնեն զինքը նորանոր պատիւներու. այսպէս կ'ընտրուի Քննիչ սուրբ Կարգի թիկնածուներու, Խորհրդական՝ Արեւելեան Ծիսից ժողովին, անդամ՝ Արեւելեան Օրինագրքի Յանձնախումբին: Սրբազան Քահանայապետը առանձնապէս կը պատուէ զինք Գաղտնի Սենեկապան անուանելով: 1932ին երբ Գերպ. Սարգիս Տէր Արրահամեան հրաժարած էր Լեւոնեան վարժարանի տեսչութենէ՝ կը բարձրանար սոյն պաշտօնին: 1935ին՝ Առաքելական Այցելուի հանգամանքով կ'երթայ Չամար, եւ նոյն տարին կ'ընդունի ի նշան Հոռոմայ մեծ վստահութեան՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւն: Նա կը վարէր գեռ իւր այս բարձր պատուին մէջ իւր սիրասուն Կղերանոցը, երբ ահա հայ Եպիսկոպոսաց ժողովը ի Պէյրութ, որուն կը մասնակցէր, կ'ընտրէ զինքը 30 Նոյ. 1937ին՝ Պատրիարք-Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ: Սրբազան Քահանայապետը կը վաւերացնէ նոյն ընտրութիւնը, եւ Գերպ. Փրանկիսկոս Աղաճանեան, տիտղոսաւոր Եպիսկոպոս Կոմանայի, պատրիարքական աթոռ կը բարձրանայ Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան անունով: Իբր պատուոյ հիւր Իտալական Նաւային Ընկերութեան, ընկերակցութեամբ Արհ. Պաթանեան Արքեպիսկոպոսի եւ Պահապանեան ու Տէր Արրահամեան Եպիսկոպոսներու կ'ուղեւորի գէպի Յաւիտենական Քաղաքը ընդունելու համայն քրիստոնէից Հօրմէն իւր



բարձր իշխանութեան նշանը՝ պալլիումը: Սրբազան Քահանայապետը այդ առթիւ զարձեալ կը յայտնէ իւր ջերմ զգացումները հայ ժողովուրդի հանդէպ, եւ մեծ ուրախութեամբ կը շնորհէ նորընտիր Կաթողիկոս-Պատրիարքին պալլիումը իւր հայրական օրհնութեան հետ:

Որդիական հրճուանքի ցնծագին ոգեւորութեամբ կ'ողջունենք մեր նորընտիր Գերերջանիկ Պատրիարքը, որ իւր փայլուն անցեալով զրաւական կու տայ մեզի երջանիկ ապագայի: Կ'ողջունենք զինք անվերապահ վստահութեամբ թէ հայ կաթողիկէ համայնքը ստացաւ կորովի, կարող Առաջնորդ ու Գլուխ մը, լի Աստուծոյ հոգւով, որ մեր սուրբ Հայրերու շաղով պիտի վարէ զմեզ: Ու ուրախութեամբ օծուն մեր պաղատանքները կրկին կը բարձրանան Յաւիտենական Հօր դահլ հայցելու ջերմաջերմ աղօթքով՝ իւր ծառային համար երկնաւոր օրհնութիւն, առատաբուխ շնորհք ու երկար կեանք:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 1-3

ՅՈՒՆՈՒԱՐ-ՄԱՐՏ

ՅԲ. ՏԱՐԻ 1938

ՍԵՐԻՈՍԻ «ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՆ», ԵՒ Փ. ԲԻԻԶԱՆԳԵԱՅ Ա. ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻ
ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

1. ՍԵՐԻՈՍ ԵՒ ԱՐՔԱՅԱՅԱՆԿԵՐԸ

Սերիոս, Բագրատունեաց եպիսկոպոս, գրած է պատմական աշխատութիւն մը, կոչուած «Պատմութիւն ի Հերակղ»: Աշխատութեանս մէջ կը խոստանայ պատմագիրը տալ ա. «Զնախնի քաջացն վիպասանութիւնս». բ. «Ի նոյն շարագրելով ասացից գառ ի յապայսն եղեալս» եւ գ. «ցուցից համառօտիւք գարդեաց ժամանակացս վերաբերութիւնս». այս ինքն պատմել ըստ աւանդութեան Հայոց նախաւոր շրջանի պատմութիւնը. ապա նկատի առնել պատմական շրջանի (310 ն. Ք. — 651 յ. Ք.) դէպքերն ու դէմքերը, ի վերջոյ ընծայել ժամանակակից պատմութիւնը, որ կ'աւարտի 661 տարւոյն¹:

Այս տեղ նկատի պիտի առնեմ միայն Բ. մասին առաջին բաժինը, որ կը բովանդակէ հետեւեալ արքայացանկերը.

ա. Սելեւկեան թագաւորներու յաջորդութիւնը 310—129 ն. Ք.

բ. Պարթեւ թագաւորներու յաջորդութիւնը՝ 250 ն. Ք.— 226 յ. Ք.:

գ. Հայ թագաւորներու յաջորդութիւնը՝ 95 ն. Ք.—373 յ. Ք.:

դ. Հայ, Սասանեան եւ Հռոմայեցի արքաներու եռանուն Արքայացանկը՝ 226—409:

ե. Սասանեան եւ Բիւզանդական արքաներու երկանուն արքայացանկը՝ 410—651:

Այս Արքայացանկերը առաջին տեսութեան հոյակապ եւ չափազանց հետաքրքրական կերտուածք մը կ'երեւան: Ուշագիւր զննութիւնը սակայն չուտով յուսախաբ կը թողու հետաքրքիրները: Արգարեւ գեղեցկագիր յօրինուածք մը ըստ արտաքնոյն, բայց խառնափնդոր մը ըստ ներքնոյն, զաղար մը յուշկապարիկներու:

¹ Սերիոսի անձին եւ գրութեան մասին տե՛ս մեր զննութիւնը. Սերիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ. ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ, 1923, էջ 1—9, 97—105, 220—227, 328—341, 396—420 = Մատենադրական հետազոտութիւններ, Բ. (Վիեննա 1924), էջ 1—192: